# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**15 հուլիսի 2019 թվականի N 176-Ա**

**«ՀԱԼԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Գանդայանի զեկուցագիրը և «Հալիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շ.Գաբրիելյանի բացատրությունը՝

**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.**

Կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները, ինչպես նաև հանրակրթական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները ոչ պատշաճ իրականացնելու համար «Հալիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շ.Գաբրիելյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

15.07.2019

X

VERIFIED OCSP 15.07.2019 12:53:33 GMT+4

Подписано: POGHOSYAN HUNAN 4003640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ